ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____-Ա «____» _____ **2021թ.**

ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշման և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Վարդան Կոստանյանին:

31.05.2021

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN GARIK 2811870695

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2021թ. «_____» «____» -ի
N _____ - Ա հրամանի

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

1. Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մոնիթորինգի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվում է ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներից:

2. Ծրագրի նպատակն է՝

1) գնահատել պետական գույքի ռիսկայնության աստիճանը,

2) վեր հանել գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից թույլ տրված շեղումների և դրանց պատճառած վնասների չափը,

3)բացահայտել գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը,

4) պետական մարմինների, կազմակերպությունների և հիմնադրամների գործառույթների իրականացման համար պետական մարմնին ամրացված, կազմակերպությանը և հիմնադրամին օգտագործման տրամադրված գույքի օպտիմալ կազմի և կառուցվածքի ձևավորումը,

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացումը,

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի ծանրաբեռնվածության իջեցումը,

7) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը,

8) գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ անհրաժեշտ մոնիթորինգի բազայի ստեղծումը,

9) գույքի օգտագործման վիճակի գնահատումը:

3. Ծրագրում առաջնահերթ ընդգրկվում են Երևան քաղաքում գտնվող մոնիթորինգի ենթակա կազմակերպությունների գույքը.

1) պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրված գույքի մոնիթորինգ՝ համաձայն N1 Ցանկի,

2) պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքից մինչև մեկ տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրված տարածքների մոնիթորինգ՝ համաձայն N2 Ցանկի,

3) պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում տեղակայված կապի սարքավորումների մոնիթորինգ՝ համաձայն N3 Ցանկի:

4. Քարտուղարության պետի պարտականությունները կատարողին՝ սույն հրամանի 1-ին կետով Ծրագիրը հաստատվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրել Պետական գույքի կառավարման կոմիտեի ինտերնետային պաշտոնական www.stateproperty.am կայքում:

5. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետին՝

1) սույն հրամանի 1-ին կետով ծրագիրը հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով ստեղծված աշխատանքային խումբը ձևավորելու նպատակով դիմել համապատասխան ստորաբաժանումներին և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին թեկնածուներ ներկայացնելու համար,

2) սույն կետի 1-ին ենթակետով առաջարկվող թեկնածուների մասնակցությամբ, 2 աշխատանքային օրվա ընթացքում, մշակել մոնիթորինգ իրականացնելու և արձանագրություններ կազմելու նպատակով ստեղծվող աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատելու մասին հրամանի նախագիծը և ներկայացնել Կոմիտեի նախագահի հաստատմանը:

6. Իրավաբանական վարչության պետին՝ սույն հրամանի 1-ին կետով Ծրագիրը հաստատվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել սույն հրամանի 1-ին կետով հաստատվող հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված N1, N2 և N3 Ցանկերի վերաբերյալ տեղեկատվություն և կնքված պայմանագրերի պատճենները:

7. Աշխատանքային խումբը Երևան քաղաքում գտնվող յուրաքանչյուր միավոր գույքի մոնիթորինգը պետք է իրականացնի 3 աշխատանքային օրվա ընթացքում և 2021

թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 1 աշխատանքային օրվա ընթացքում կազմի արձանագրություն և ներկայացնի Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի ապրիլի 1-ի 79-Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով ստեղծված հանձնաժողովի քննարկմանը: